# ՈՐՈՇՈՒՄ

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 1-ին կայացած նիստի (N 7 արձանագրություն)

## Նիստի մասնակիցներ

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 անդամներից 9-ը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ.

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N2 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

/Զեկուցող՝ խորհրդի նախագահ Ն.Սարգսյան /

Ղեկավարվելով ‹‹Հանրակրթության մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319 որոշմամբ հաստատված ‹‹Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի›› 2-րդ , 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջները՝

## Խորհուրդը որոշում է՝

1.«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) տնօրենի պաշտոնի համար 2021 թվականի նոյեմբերի 5-ից հայտարարել մրցույթ:

2. Հաստատել տնօրենի պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am կայքում ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N174-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի/ ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամներ Գյուտ Սարուխանյանին և խորհրդի քարտուղար Լուսաբեր Սաֆարյանին:

5. Մրցույթն անցկացնել Գեղհովիտ գյուղի N1 միջնակարգ դպրոցի շենքում, այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2021 թվականի դեկտեմբերի 9 -ին ժամը $14^{00}$-ին:

6. Հանձնարարել խորհրդի նախագահ Ն.Սարգսյանին՝ կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի սույն որոշման պատճենը և հայտարարության տեքստը մինչև 2021 թվականի նոյեմբերի 4-ը, պատշաճ կարգով և պաշտոնական գրությամբ ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարին և Գեղարքունիքի մարզպետին:

Խորհրդի նախագահ՝ _____ Ն.Սարգսյան

Խորհրդի քարտուղար՝ _____ Լ.Սաֆարյան

# Մրցույթի հայտարարություն

‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N2 միջնակարգ դպրոց›› պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն՝ ‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N2 միջնակարգ դպրոց›› պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N1 միջնակարգ դպրոց›› պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2021 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը $13^{00}$-ից մինչև ժամը $18^{00}$-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 9-ին՝ ժամը $14^{00}$-ին, ‹‹ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի N1 միջնակարգ դպրոց›› պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ հասցե. ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղհովիտ, 5-րդ փ. 31 շենք:

Տեղեկությունների համար կապ հաստատել 055787872 հեռախոսահամարով կամ գրել lusabersafaryan@gmail.com էլեկտրոնային հասցեին: